ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊԵԿ միջազգային համագործակցության վարչության մաքսային համագործակցության բաժնի պետ Օհաննա Գառգալոյանի՝ 2025թ. մարտի 2-ից 5-ը Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել) գործուղման արդյունքների մասին

1.Անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը

Օհաննա Գառգալոյան - ՀՀ ՊԵԿ միջազգային համագործակցության վարչության մաքսային համագործակցության բաժնի պետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

ՀՀ ՊԵԿ միջազգային համագործակցության վարչության մաքսային համագործակցության բաժնի պետ Օհաննա Գառգալոյան Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, մարտի 2-ից 5-ը:

3. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպություն:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Համաշխարհային մաքսային կազմակերպությունը (այսուհետ՝ ՀՄԿ) ստեղծվել է 1952 թվականին՝ որպես մաքսային համագործակցության խորհուրդ: Այն հանդիսանում է անկախ միջկառավարական մարմին, որի առաքելությունն է բարձրացնել մաքսային մարմինների գործունեության արդյունավետությունը: Այսօր ՀՄԿ-ն ներկայացնում են աշխարհի 184 մաքսային ծառայություններ:

Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է Համաշխարհային մաքսային կազմակերպությանը 1992թ. հունիսից և ակտիվորեն ներգրավված է կազմակերպության գործունեության մեջ:

ՀՄԿ մաքսային կազմակերպության կողմից յուրաքանչյուր տարի կազմակերպվում է Բարեվարքության ենթակոմիտեի նստաշրջանը: 2025թ. մարտի 3-ից 4-ը ք. Բրյուսելում

(Բելգիայի թագավորություն) տեղի է ունեցել ՀՄԿ Բարեվարքության ենթակոմիտեի 24-րդ նստաշրջանը:

Բարեվարքության ենթակոմիտեն գործում է ՀՄԿ խորհրդի և Քաղաքականության հարցերով հանձնաժողովի ենթակայության ներքո՝ ՀՄԿ քարտուղարութան վարչական աջակցությամբ: Ենթակոմիտեի հիմնական նպատակը ՀՄԿ գործունեությունը բարեվարքության ոլորտում ուղղորդելն է: Բարեվարքության ենթակոմիտեին անդամակցում են մաքսային մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները:

Բարեվարքության ենթակոմիտեի նպատակն է անդամ պետությունների միջև բարեվարքության և էթիկայի փորձի փոխանակման հարթակի ապահովումը: Ենթակոմիտեն համակարգում է ՀՄԿ բարեվարքությանն առնչվող գործիքների մշակման, ներդրման և գնահատման հարցերը, ինչպես նաև ապահովում է մասնավոր հատվածի և միջազգային այլ կազմակերպությունների հետ բարեվարքության և էթիկայի հետ կապված գործունեության արդյունավետ համակարգումը և բարելավումը: ՀՄԿ վերապատրաստման դասընթացներում, տեխնիկական աջակցման բոլոր ծրագրերում, ինչպես նաև մաքսային ծառայությունների միջազգային համագործակցության ոլորտներում Բարեվարքության ենթակոմիտեն ապահովում է նաև բարեվարքության բաղադրիչի առկայությունը:

5. Քննարկված թեմաները՝

Բարեվարքության 24-րդ նստաշրջանում քննարկվել են մի շարք կարևոր հարցեր, որոնք ուղղված են մաքսային կառույցների և մաքսային ծառայությունների բարեվարքության, էթիկայի և արդյունավետության բարձրացմանը:

Նիստի շրջանակներում վերանայվել են 2022-2025 թթ. ՀՄԿ Բարեվարքության ենթակոմիտեի աշխատանքային ծրագրի արդյունքները, մշակել առաջիկա տարիների աշխատանքային ծրագիրը և միջոցառումները, անդամ պետությունների ներկայացուցիչների կողմից քննարկել բարեվարքության, էթիկայի, կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացին և բարեվարքությանն աջակցելու ուղղությամբ նոր գործիքների և ուղեցույցների կիրառումը, ինչը թույլ կտա բարձրացնել մաքսային ծառայությունների բարեվարքության, էթիկայի և արդյունավետության որակը:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Բանակցություններ են ընթացել նաև բարեվարքության արդյունավետության բարձրացման նպատակով խրախուսման միջոցների և պատժամիջոցների եղանակների կիրառման առնչությամբ: Միևնույն ժամանակ, նիստի շրջանակներում խմբային քննարկումներ են անցկացվել նաև մաքսային ծառայությունների անձնակազմների ներգրավվածությամբ էթիկայի համընդհանուր մշակույթի ստեղծման առնչությամբ, ինչը խթանում է անդամ պետությունների մաքսային ծառայությունների միջազգային համագործակցության զարգացմանը և ամրապնդմանը՝ հատկապես մաքսային ծառայության բարեվարքության և էթիկայի համակարգերի կիրառման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Ընդունվել են որոշումներ Բարեվարքության ենթակոմիտեի նախագահի և նախագահի տեղակալի ընտրության մասին:

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Նստաշրջանը հնարավորություն է տալիս անդրադառնալ ՀՄԿ-ի ռազմավարական պլանների շրջանակներում բարեվարքության նշանակությանը և առավելություն տալիս այն հանգամանքին, որ մաքսային կառույցները շարունակեն իրենց կարևոր դերակատարությունը բարեվարքության արդյունավետության բարձրացման հարցում գլոբալ մակարդակում:

ՀՄԿ բարեվարքության ենթահանձնաժողովին մասնակցությունը հնարավորություն է ստեղծում բարեվարքության ասպարեզում աշխարհում եղած փորձերին և վերջին ձեռքբերումներին ծանոթանալու համար

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Օ. Գառգալոյան

06.03.2025 թ.